ԹԵՐԹՔ՝ 1+258+1 (հեղինակային էջակալում՝ 1-527: Էջադրելիս վրիպմամբ 433 էջի փոխարէն գրել է 434, այդ իսկ պատճառով այստեղից սկսած մինչեւ վերջ մէկ էջի խախտում կայ եւ զոյգ էջահամարը գտնւում է աջ կողմում): Ձեռագրում եղած ներդիր փաստաթղթերը չեն էջակալուած: ՊՐԱԿ՝ Ա-ԺԷ (Ա-Դ, Թx12, Ե-Ը՝ 14, Թ՝ 12, Ժ, ԺԲ, ԺԵ ՝ 16, ԺԱ՝ 20, ԺԳ, ԺԴ՝ 24, ԺԶ՝ 8, ԺԷ՝ 18)+1: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, լուսագծերով, եզրերը չկտրուած: ՉԱՓԵՐԸ՝ 23,5x17,2: ԳՐԱԴԱՇՏԸ՝ միասիւն (19x12, 19,5x12,5, 19,51x3, 19,7x13): ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐԸ՝ 3,5, սահմանագծուած: ԳԻՐ՝ շղագիր, բոլորգիր: ՏՈՂ՝ 31: ԿԱԶՄ՝ ստուարաթղթէ միջուկով դեղնագոյն մոմլաթ. աստառ՝ սպիտակ թուղթ, չափերը՝ 18x24x4: Կազմի ներսում՝ «EX BIBL. ARMEN. S. LAZARI Բ.Զ.», առանձին թերթիկի վրայ՝ «1688. Զ.Դ.»: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1+1, թուղթ, չգրուած: ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ՝ չունի: ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ բազում: ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթեզերքը կանոնաւոր: Բնագիրը հեղինակի կողմից, մինչեւ իր մահը, բազմիցս վերանայուել է, լուսանցքներում արուել են բազում սրբագրումներ եւ յաւելումներ:

ձեռագրի սկզբում	1 դատարկ, չհամարակալուած թերթ:
թ. 3r, չհամարակալուած	*Տիտղոսաթերթ՝* **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ,** որ զամս երեսուն 'ի կեանս իւր շրջեցաւ յԵւրոպիայ, յԱսիա, 'ի Հնդիկս եւ յԱփրիկէ, 'ի Հապեշստան, շարադրեալ ի նոյն ինքն 'ի Թովմաճանէ՝ հրամանաւ վեհին իւրոյ արբայի 'ի Վէնէտիկ, ի վանս Սրբոյն Ղազարու: 'Ի հայրապետութեան տեառն Ղուկասու հայոց կաթուղիկոսի 'ի թուականիս Փրկչին 1790 'ի դեկտեմբեր 15. իսկ ըստ Հայոց ՌՄԼԹ:
թ. 3v	*դատարկ*, չհամարակալուած
թ. 4r-5r	յԱռաջաբանութիւն (*չհամարակալուած*)
թ. 5v	*այս էջին փակցուած է 1749 թ. Վենետիկում հրատարակուած* «Համատարած Աշխարհացոյց»-*ը*[19]: (չհամարակալուած)

[19] *Բնագիրը տե՛ս Հայկազեան Բառարանի Ա. հատորի 258-259 էջերի միջեւ (այս քարտէզի մասին տե՛ս* **Հ. Ս. Ճեմճեմեան.** *Քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ..., էջ 12-15*):